ISSN 1829–0043

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

Լ Ր Ա Բ Եֆ Ր

ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

ԺՈՂՈՎԱԾՈՒ

В Е С Т Н И К

ИНЖЕНЕРНОЙ АКАДЕМИИ АРМЕНИИ

СБОРНИК НАУЧНО-ТЕХНИЧЕСКИХ СТАТЕЙ

P R O C E E D I N G S

OF ENGINEERING ACADEMY OF ARMENIA

SCIENTIFIC AND TECHNOLOGICAL

COLLECTED ARTICLES

XVI

ՀԱՏՈՐ ТОМ VOLUME

№ 1

ԵՐԵՎԱՆ ЕРЕВАН YEREVAN

2019

Հրատարակվում է Հայաստանի Ճարտարագիտական ակադեմիայի (ՀՃԱ) և Միջազգային Ճարտարագիտական ակադեմիայի (ՄՃԱ) Նախագահությունների որոշմամբ, ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ՀՀ ԲՈՀ) կողմից **06.03.2012 վերանայված** ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԼՐԱԲԵՐ (ՀՃԱԼ)
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գլխավոր խմբագիր՝ տ.գ.դ., պրոֆ. **Բ. ԳՈՒՍԵՎ (ՌԴ)**

Գլխ. խմբագրի առաջին տեղակալ՝ տ.գ.դ., պրոֆ. **Ս. ՄԻՆԱՍՅԱՆ (ՀՀ)**

Գլխ. խմբագրի տեղակալ՝ տնտ.դ., պրոֆ. **Վ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆ (ՀՀ),**

Պատ. քարտուղար՝ տ.գ.թ., դոց. **Ռ. ԲԱՐՍԵՂՅԱՆ (ՀՀ)**

Խմբագրական խորհրդի անդամներ տ. գ. դ. , պրոֆ. Ա. Անդրյուշին (ՌԴ), պրոֆ. Ի. Էմրի (Սլովենիա), ք.գ.դ., պրոֆ. Լ. Թավադյան (ՀՀ), պրոֆ. Բ. Կատալինիչ (Ավստրիա), ֆ. մ. գ. դ. , պրոֆ. Հ. Մաթևոսյան (ՀՀ), տ. գ. դ. , պրոֆ. Վ. Մելիքյան (ՀՀ), տ. գ. դ. , պրոֆ. Ա. Միխալեվիչ (Բելառուս), տ. գ. դ. , պրոֆ. Վ. Պետրոսյան, ֆ. մ. գ. դ. , պրոֆ. Ա. Սահակյան (ՀՀ), ք. գ. դ. , տ. գ. դ. , պրոֆ. Ն. Վորոպայ (ՌԴ), տ. գ. դ. , պրոֆ. Լ. Տանին (Բելառուս)

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԼՐԱԲԵՐ»-ի խմբագրական խորհուրդը շնորհակալություն է հայտնում «Եվրոպական ներդրումային ֆինանսական խմբի» նախագահ **ԷՌՆԵՍՏ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻՆ ԼՐԱԲԵՐԻ** հրատարակման գործում ցուցաբերած օգնության համար:

Редакционный совет **“ВЕСТНИКА ИНЖЕНЕРНОЙ АКАДЕМИИ АРМЕНИИ”** благодарит президента НП “Европейская Инвестиционная Финансовая Группа” **ЭРНЕСТА АРУСТАМЯНА** за оказанную помощь при издании **ВЕСТНИКА.**

Editorial council of **“PROCEEDINGS OF ENGINEERING ACADEMY OF ARMENIA”** expresses gratitude to the president of the “European Investment Finance Group” **ERNEST ARUSTAMYAN** for the help in publishing “PROCEEDINGS”.

© ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԼՐԱԲԵՐ (ՀՃԱԼ), 2019

Печатается согласно решению Президиумов Инженерной академии Армении (ИАА) и Международной инженерной академии (МИА), включен в список публикаций, принятых Высшей аттестационной комиссией (ВАК) РА

ВЕСТНИК ИНЖЕНЕРНОЙ АКАДЕМИИ АРМЕНИИ (ВИАА)

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Главный редактор	д.т.н., проф., **Б. Гусев (РФ)**
Первый заместитель гл. редактора	д.т.н., проф. **С. Минасян (РА)**
Заместитель гл. редактора	д.экон.н., проф. **В. Бостанджян** (РА)
Отв. секретарь	к.т.н., доц. **Р. Барсегян (РА)**
Члены редакционного совета	д.т.н., проф. А. Андрюшин (РФ), д.т.н., проф. Н. Воропай (РФ), проф. Б. Каталинич (Австрия), д.ф-м.н., проф. НАН РА Г. Матевосян (РА), д.т.н., проф. В. Меликян (РА), д.т.н., проф. А. Михалевич (Беларусь), д.т.н., проф. В. Петросян (РА), д.ф-м.н., проф. А. Саакян (РА), д.х.н., проф. Л. Тавадян (РА), д.т.н., проф. Л. Танин (Беларусь), проф. И. Эмри (Словения)

Printed according to the Decision of Engineering Academy of Armenia (EAA) and International Academy of Engineering (IAE), included into the list of publication accepted by the Highest Certifying Commission (HCC RA)

PROCEEDINGS OF ENGINEERING ACADEMY OF ARMENIA (PEAA)

EDITORIAL COUNCIL

Editor-in-chief	doctor of tech. sci., prof,, **B. Gusev (RF)**
First deputy Editor-in-chief	doctor of tech. sci., prof. **S. Minasyan (RA)**
Editor-in-chief deputy	doctor of econ. sci., prof. **V. Bostanjyan (RA)**
Responsible secretary	candidate of tech. sci., assoc. prof. **R. Barseghyan (RA)**
Members of the Editorial Council	doctor of tech. sci., prof. A. Andryushin (RF), prof. I. Emri (Slovenia), prof. B. Katalinic (Austria), doctor of phys.-mat. sci., prof. H. Matevosyan (RA), doctor of tech. sci., prof. V. Melikyan (RA), doctor of tech. sci., prof. A. Mikhalevich (Belarus), doctor of tech. sci., prof. V. Petrosyan (RA), doctor of phys.-mat. sci., prof. A. Sahakyan (RA), doctor of tech. sci., prof. L. Tanin (Belarus), doctor of chemical sci., prof. L. Tavadyan (RA), doctor of tech. sci., prof. N. Voropai (RF)

© ВЕСТНИК ИНЖЕНЕРНОЙ АКАДЕМИИ АРМЕНИИ (ВИАА), 2019
© PROCEEDINGS OF ENGINEERING ACADEMY OF ARMENIA (PEAA), 2019

УДК 005:338.24(479.25) ЭКОНОМИКА И УПРАВЛЕНИЕ

В.Б. Бостанджян

ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ ЭКОНОМИЧЕСКИМ РАЗВИТИЕМ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В РАМКАХ ЕВРАЗИЙСКОГО ЭКОНОМИЧЕСКОГО СОЮЗА

В настоящее время вопросы, связанные с местом и ролью Армении в современной системе экономических отношений, с учетом сложной геополитической и геоэкономической ситуации страны являются актуальными для разработки экономической стратегии развития страны. Статья посвящена изучению проблем интеграции экономики Армении в Евразийский экономический союз (ЕАЭС), оценке возможностей формирования высокотехнологичного производства и новых отраслей, а также совершенствованию механизмов управления экономического хозяйства и выявлению конкурентных преимуществ страны. В работе также оценены перспективы экономического сотрудничества Армении с другими странами и предложены пути их реализации.

Ключевые слова: *Евразийский экономический союз, интеграция, механизмы управления, национальная экономика, конкурентные преимущества, стратегия, иностранные инвестиции, бизнес-среда, высокотехнологичное производство.*

Экономика Армении претерпела глубокие преобразования со времени ее независимости. Устойчивый рост, амбициозные реформы, а также приток денежных переводов создали свободную и относительно конкурентоспособную рыночную среду. Нельзя упускать из виду воздействие на экономику страны и ее внешнеэкономические связи членства в разных международных экономических и финансовых организациях.

Важным шагом в направлении углубления международной экономической интеграции стало членство Армении во Всемирной Торговой Организации (ВТО) с февраля 2003 года, что также открыло множество возможностей для расширения торговых отношений во многих регионах и сферах международного сотрудничества, где страна была менее активна [1].

К числу способствующих факторов внешнеэкономической интеграции следует отнести также человеческие ресурсы страны. Следует отметить, что рабочая сила в Армении является высокообразованной, квалифицированной, с богатой традицией мастерства во многих специализированных секторах со множеством успешных примеров конкурентоспособных армянских компаний, занимающихся информационными технологиями, наукоемким производством, высококачественным текстилем, одеждой и ювелирными изделиями, виноделием и производством знаменитого армянского коньяка.

Помимо новых отраслей и высокотехнологических производств, в экономике страны существует много областей, где исторические и культурные традиции Армении придают дополнительное преимущество местной рабочей силе с точки зрения конкурентоспособности. Например, существует высокий стандарт мастерства в роскошных коврах, который наряду с уникальностью армянского искусства занимает особое место в мировом рынке ковров и в текстильном производстве в целом. Ювелирные изделия и обработка алмазов также являются областями, в которых армянские мастера используют свои исторические традиции и с помощью высококвалифицированной рабочей силы являются важными компонентами национальных конкурентных преимуществ. Наконец, армянское вино и бренди - легендарные продукты, которые производились в стране на протяжении тысячелетий, что создает благоприятную среду для сельскохозяйственной деятельности из-за высокой частоты солнечных дней в стране и отличного качества земельных и водных ресурсов [2].

В настоящее время в Армении созданы свободные экономические зоны без налога на прибыль, НДС или налога на имущество. Регистрация новых компаний является самой либеральной и простой на постсоветском пространстве. Созданы равные возможности для местных и иностранных инвесторов. В отдельных случаях, когда частные компании намерены наладить производство товаров, которое удовлетворяет спрос на внутреннем рынке, а также может умножить объемы экспорта и завоевать новые рынки сбыта за пределами страны, можно реально претендовать на дополнительные налоговые льготы. Армения предлагает специальные стимулы для инвесторов, особенно для ИТ-компаний и начинающих

компаний, а также приграничных регионов и крупных экспортеров.

Официальное открытие свободной экономической зоны Мегри открывает широкие возможности развития торгово-экономических отношений с Ираном и другими странами региона, что будет не только стимулировать ускоренное развитие Сюникского региона, но и способствовать установлению устойчивой связи между Ираном, странами ЕАЭС и Грузией [3].

Необходимо отметить, что присоединение Армении к Евразийскому экономическому союзу привело, с одной стороны, к структурным изменениям основных статей платежного баланса, ослаблению экономических отношений с Европейским Союзом (ЕС), с другой стороны - углублению торгово-экономических отношений Армении с Россией.

Основываясь на анализе показателей торгово-экономического оборота, можно заключить, что членство в ЕАЭС оказывает положительное влияние на экономику Армении и на экономический рост. В результате либерализации рынка в контексте присоединения Армении к ЕАЭС армянские сельскохозяйственные продукты, готовые и переработанные продукты и сырье проникают на эти рынки без таможенных барьеров.

На основе проведенного исследования представлены перспективы реализации национальных конкурентных преимуществ в рамках ЕАЭС. Для этого выявлены следующие критерии выбора национальных конкурентных преимуществ: производительность труда; конкуренция; качество; цена; квалификация; образование; традиции и национальные особенности производства; инновации; специфика спроса; законодательство; транспортные и иные коммуникации; инфраструктура; геополитика; качество жизни; менталитет; другие факторы.

Указанные факторы не претендуют на роль стандартов, которые полностью раскроют сущность и определят уровень конкурентоспособности товаров и услуг. Они могут служить лишь предметом обсуждения для понимания и обоснования конкурентоспособности производимых товаров и услуг. Цель исследования состоит в том, чтобы обосновать важность выявления критериев для выбора национальных конкурентных преимуществ.

Даже самые тесные и предсказуемые двусторонние торгово-экономические отношения не могут быть определяющими для стран в отрыве от учета интересов соседних стран в регионе, а также перспектив развития глобальной экономики. Следовательно, представляется важным рассмотрение возможности реализации преимуществ межгосударственного кооперирования, особенно путем оценки приоритетных отраслей (национальных конкурентных преимуществ) каждой страны и учета степени открытости каждого национального хозяйства.

В результате исследования сформулированы следующие выводы и предложения:

1. Эффективность реализации многих региональных проектов и региональной интеграции в целом во многом зависит от уровня эффективности взаимодействий и координации экономических политик отдельных государств, входящих в экономическое объединение или союз. При этом государства ответственны за обеспечение безопасности для эффективной организации, а также за создание правовых и иных институциональных основ экономической интеграции. Следовательно, именно государства должны обеспечить необходимые предпосылки и условия для интеграционных процессов. Высшей формой регулирования является государственное экономическое программирование, охватывающее многочисленные цели и весь набор инструментов, а также управление этим процессом, с помощью которого можно изменить соотношение спроса и предложения рынка, обеспечить конкурентоспособность экономики.
2. Исследования показывают, что странам легче добиться экономического роста при присоединении к разным региональным образованиям. Общими для них следует считать не только исторические корни интеграции, но и международные правовые документы, обязательства и институциональные основы, которые предшествуют их формированию. В частности, для ЕАЭС важно учитывать то обстоятельство, что четыре из пяти стран ЕАЭС являются членами ВТО, что во многом облегчило задачу формирования приемлемых законодательно-правовых основ для всех стран ЕАЭС.
3. На данном этапе становления и развития ЕАЭС разработаны и эффективно действуют основные предпосылки формирования Евразийского экономического союза. Процесс разработки законодательно-правовых основ союза носит продолжительный характер и должен учитывать тенденции развития мировой экономики. Экономическая политика, проводимая в рамках ЕАЭС, также должна учитывать риски и ограничения, возникающие вследствие экономической политики глобальных игроков.
4. Несмотря на все трудности в формировании и развитии конкурентосопособной региональной организации, ЕАЭС является самым крупным межгосударственным образованием в мире. Его территория

занимает 20 *млн км²*, или 15% мировой суши. ЕАЭС является лидером по добыче нефти (включая газовый конденсат) и естественного газа. В 2013 году его доля в мировом производстве данных энергоносителей составляла 18,4% и 14,9% соответственно. Он занимает 3-е место по общему объему выработанной энергии (5,4%) и 4-е по совокупной добыче угля (4,8%). Союз лидирует по совокупному производству калийных удобрений, по выплавке стали он занимает 5-е место, по чугуну – 3-е. По производству сельскохозяйственной продукции ЕАЭС также занимает лидирующие позиции.

Наибольшим потенциалом развития в рамках ЕАЭС обладают: в сфере товаров - производство фармацевтической продукции и товаров химической промышленности; в сфере услуг - поездки (охватывают товары и услуги, приобретаемые в какой-либо стране во время ее посещения нерезидентами этой страны для собственного потребления или последующей передачи третьей стороне) и транспортные услуги.

5. Место Армении в современной системе международных экономических отношений определяется сложным геополитическим положением, а также ее активной ролью в региональных интеграционных образованиях, высокообразованной, квалифицированной, с богатой традицией мастерства рабочей силой, лидерством среди постсоветских стран по институциональным реформам, стабильностью финансовой системы, уникальной возможностью сотрудничества одновременно со странами ЕАЭС и ЕС.

6. Принимая во внимание фактические экспортные показатели РА, ЕАЭС может стать важным фактором, позволяющим избежать наиболее неблагоприятных изменений в региональной экономике и в мировом хозяйстве. Членство в ЕАЭС оказало положительное влияние на экспортно-ориентированную экономику Армении, улучшились условия торгово-экономического сотрудничества, в частности, с точки зрения упрощения процедур, пограничных проверок и оформления документации, которые позволили Армении улучшить свои позиции в мировом рейтинге легкости ведения внешней торговли. В результате либерализации рынка в контексте присоединения Армении к ЕАЭС армянские сельскохозяйственные продукты, готовые и переработанные продукты и сырье проникают на эти рынки без таможенных барьеров.

7. По части реализации отечественной продукции на внутреннем рынке следует обратить внимание на экономическую политику государства, нацеленную на: импортозамещение; предоставление благоприятных условий местным производителям для стимулирования повышения конкурентоспособности; налоговые льготы для развития приоритетных отраслей; создание свободных экономических зон для развития определенных территорий и реализации экономического потенциала местных общин.

8. Конкурентоспособность национальной экономики Республики Армения обусловлена институтами, опережающими по своему развитию соответствующие институты других стран, входящих в ЕАЭС, инфраструктурой, макроэкономикой, высоким уровнем развития образования, эффективностью товарных рынков, эффективностью рынка труда, развитием финансового рынка, технологической базой, размерами рынка, развитием деловых отношений, технологическими инновациями и др. Все это, в конечном счете, может способствовать реализации конкурентных сравнительных преимуществ экономики.

9. Необходимо координировать экономические стратегии стран-членов ЕАЭС с целью выявления и лучшей реализации командных (общих) конкурентных преимуществ и извлекать уроки не только из собственного опыта, но и из опыта других региональных группировок, в том числе опыта ЕС. Странам ЕАЭС требуется глубокий анализ способствующих факторов и возможностей налаживания партнерских отношений со странами Шанхайского экономического сотрудничества (ШОС), БРИКС, АСЕАН, АСЕАН++, Черноморского экономического сотрудничества, Азиатско-Тихоокеанского экономического сотрудничества (АТЭС) и др., как с отдельными странами ЕС, так и ЕС в целом.

10. Суды на национальном и региональном уровнях, пользующиеся обычной независимостью, должны быть склонны к развитию юриспруденции, которая способствует гармонии в применении и интерпретации законов региона и способствует экономической интеграции, как это предусмотрено в соответствующих документах, но с гибкостью, которая реагирует на время, так что развитию не мешают юридические анахронизмы.

11. Считаем, что необходимо сократить политический надзор над экономическими процессами, что заметно замедляет темпы интеграции, по мере развития интеграционных процессов и укрепления основ здоровой конкуренции между хозяйствующими субъектами стран-членов ЕАЭС.

12. Важно избавиться от излишней конкуренции между хозяйствующими субъектами – частными компаниями стран-членов, которые по инерции вытесняют друг друга из новообразованного общего

рынка ЕАЭС. По сути, эти компании берут на себя бремя ответственности за реализацию общей экономической политики, выработанной совместными усилиями правительств-членов Союза. С другой стороны, частные компании должны учитывать институциональные рамки экономической интеграции и способствовать процессу выработки новых, более эффективных моделей совместными усилиями глав государств и правительств, не препятствующих таким образом процессу сокращения и устранения угроз экономической безопасности как в рамках национальных хозяйств, так и в рамках ЕАЭС.

13. В сложившихся условиях предлагаем сделать более эффективным сотрудничество между государством и частным сектором всех стран и на наднациональном уровне, что усилит позиции регионального образования как с точки зрения проведения общих экономических реформ, так и в процессе переговоров ЕАЭС с другими региональными образованиями и международными организациями по вопросам интеграционной политики и других проблем развития мировой экономики.

14. Учитывая, что диверсификация экспортной продукции и рынков является эффективным фактором стабилизации структуры, ответственные за экономическую политику в постсоветских странах должны сосредоточить внимание на мерах по расширению экономической базы в своих странах и увеличению номенклатуры экспортируемой продукции. Считаем, что увеличение объемов внешней торговли между постсоветскими и другими развивающимися странами не должно заменять торговлю с развитыми странами. Более того, диверсификация интеграционных связей может стать "страховкой" от волатильности.

15. При анализе глобальных вызовов необходимо глубже исследовать возможности цифровизации и ее экономические, социальные и иные аспекты, а также новые технологии – блокчейн, big data, искусственный интеллект, криптовалюты и другие инновационные финансовые инструменты. Причем блокчейн-технологию можно считать фундаментальным прорывом, в частности, с ее помощью можно создать механизм обмена и переработки финансовой информации между центральными банками государств-членов ЕАЭС.

16. Важным шагом в направлении повышения конкурентоспособности ЕАЭС необходимо считать выработку цифровой повестки, которую следует воспринимать не как отдельный компонент совместной работы стран-членов Союза, а как попытку пересмотра имеющихся моделей экономического и интеграционного развития.

17. На наш взгляд, нельзя исключать то обстоятельство, что, несмотря на изначальную острую критику, виртуальные, параллельные или криптовалюты могут также стать универсальным платежным средством, а технология блокчейн может обслуживать не только отдельные сферы деятельности и отрасли, но всю макроэкономическую политику. Как макроэкономическая политика отдельных стран-членов ЕАЭС, так и региональная экономическая политика требуют выработки общеприемлемых принципов и методов применения региональной криптовалюты и разных инновационных инструментов. Наднациональные органы ЕАЭС должны выработать общую позицию в сфере регулирования валют и формирования единых международных стандартов, а также рассмотрения инициатив по созданию евразийских финансовых и платежных платформ.

18. Наднациональные органы должны выработать нормы и нормативы, технические и иные стандарты, которые в состоянии предотвратить, сократить или ликвидировать возможные экономические и социальные вызовы и угрозы, связанные с внедрением новых технологий и моделей, основанных на них. К примеру, возможная эмиссия региональной криптовалюты неизбежно приведет к сокращению финансовой независимости стран-членов ЕАЭС, что может негативно повлиять на валютную, денежно-кредитную и фискальную политику указанных государств. Следовательно, необходимо задуматься как о внедрении эффективных механизмов межгосударственного финансового регулирования и контроля, так и о минимизации нежелательных последствий от их применения.

19. Представляется важным создание информационно-аналитического формата совместной работы государственных органов, деловых кругов, видных экспертов и общественных организаций, что позволит выработать трезвый, взвешенный и профессиональный подход к разрешению множества проблем, связанных с инновационными технологиями и финансовыми инструментами.

20. Реализация национальных конкурентных преимуществ и преимуществ кооперирования зависит как от каждой страны, так и от взвешенной и координированной общей внешнеэкономической политики ЕАЭС в целом. Нами предлагаются следующие способы реализации национальных конкурентных преимуществ:

- повышение конкурентоспособности отечественной продукции и ее реализация на внутреннем рынке;

- выход товаров местной промышленности на новые рынки;
- реализация сравнительных преимуществ по модели А. Смита и Д. Рикардо (двустороннее торгово-экономическое сотрудничество);
- реализация сравнительных преимуществ по модели М. Портера (кластерный подход);
- реализация конкурентных преимуществ в рамках региональных организаций, группировок и стратегических альянсов;
- реализация конкурентных преимуществ через различные формы экономической интеграции;
- реализация конкурентных преимуществ через межрегиональную интеграцию;
- реализация преимуществ кооперирования.

Анализируя геополитическую и геоэкономическую ситуацию вокруг Армении и учитывая глобальные вызовы и тенденции развития на постсоветском пространстве, важно заметить, что Армения может использовать практически все вышеперечисленные способы реализации национальных конкурентных преимуществ.

21. Реализация национальных конкурентных преимуществ с помощью вышеуказанных способов требует, в первую очередь, выработки тех критериев, которые необходимы для обоснования и выбора относительных и абсолютных преимуществ страны. В ходе экономических исследований и факторного анализа нами выявлены следующие критерии выбора национальных конкурентных преимуществ: производительность труда; конкуренция; качество; цена; квалификация; образование; традиции и национальные особенности производства; инновации; специфика спроса; законодательство; транспортные и иные коммуникации; инфраструктура; геополитика; качество жизни; менталитет; другие факторы.

22. Развитие кластеров является важным фактором конкурентоспособности. Политика экономического развития за счет перехода экономики на качественно новый уровень, т.е. за счет увеличения удельного веса вновь созданных наукоемких товаров, технологий и услуг, должна реализовываться по следующим стратегическим направлениям:

- Процесс формирования конкурентных преимуществ в республике происходит восприятием основного стратегического принципа, согласно которому конкурентоспособность достигается не путем наследования, а поэтапно. Конкурентоспособность экономики зависит от возможности модернизации и инноваций в реальном секторе.
- Развитие инновационного процесса. В контексте современной глобализации, когда потоки капитала стали беспрецедентными и в значительной степени ориентированы на высокие технологии, а инновации стали ключевым фактором в рыночной экономике, политика развития инноваций направлена на то, чтобы сделать Армению привлекательной.
- Ключом к постоянно улучшающейся деловой среде и уровнем привлекательности является наличие благоприятных и устойчивых правовых норм, при которых бизнесмен, ощущая бремя бизнес-рисков, будет прилагать усилия для улучшения управленческих навыков.
- Продвижение экспорта. В целях обеспечения прогрессивного экспорта страна реализует политику стимулирования экспорта не только для преодоления препятствий. Наряду с упрощением администрирования принимаются определенные меры стимулирования, что оставляет в стороне объективные экспортные ограничения.
- Территориальное развитие. Чтобы привести Республику Армения к устойчивому экономическому развитию, важно, чтобы экономика имела сбалансированную направленность в географическом смысле. Принятая политика определяет проблему улучшения бизнес-среды в регионах и сбалансированного социально-культурного развития регионов, приоритетными задачами которых являются совершенствование системы управления и совершенствование инфраструктуры.

23. Предлагаем предпринять конкретные меры для интеграции “Север-Юг” и активизировать участие Армении в указанном проекте. Важно синхронизировать интересы стран-членов ЕАЭС с проектами развития Грузии, что, в свою очередь, требует разработки реалистических стратегий, проведения сравнительного анализа экономических показателей России, Грузии, Армении и Ирана.

24. На основе вышеуказанного можно также представить определенные прогнозы на обозримое будущее. В частности:

- изменение политического курса, очевидно, будет сложным, но более активные настроения могут поддерживаться в пределах допустимых видов с помощью amicus curiae и экспертов, чтобы можно было достичь осознанных решений. Успех экономической интеграции в ЕАЭС будет зависеть от

того, в какой степени рассматривается вопрос о справедливом распределении выгод;

- в среднесрочной перспективе экономический рост за счет экспорта “по версии 2.0”, при котором торговля по направлению “Юг-Юг” играет более важную роль, станет основным фактором;
- после “Бархатной революции” в Армении в мае 2018 года интеграционные процессы будут иметь тенденцию к ускорению как в рамках ЕАЭС, так и с ЕС;
- в случае создания свободной зоны количество товаров, ввозимых из ЕС, возрастет, что приведет к обострению экономической конкуренции;
- возможен существенный прогресс в переговорах по созданию Свободной и Всеобъемлющей зоны свободной торговли между Арменией и Европейским Союзом. Создание свободной зоны в Армении приведет к существенному увеличению доходов, а цены на товары станут более конкурентоспособными.

Литература

1. http://www.wto.am/documents/protocol_on_the_accession.pdf
2. **Սարգսյան Հ., Մարկոսյան Ա.** Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները: - Երևան, 2014. - 550 էջ:
3. https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%A5%D5%B2%D6%80%D5%AB_%D5%A1%D5%A6%D5%A1%D5%BF_%D5%BF%D5%B6%D5%BF%D5%A5%D5%BD%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%A3%D5%B8%D5%BF%D5%AB

11.05.2019.

Վ.Բ. Բոստանջյան

ԵԱՏՄ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ներկայումս երկրի տնտեսական հարաբերությունների ներկա համակարգում Հայաստանի տեղի ու դերի հետ առնչվող խնդիրները, հաշվի առնելով երկրի բարդ աշխարհաքաղաքական եւ աշխարհատնտեսական վիճակը, համարվում են արդիական՝ երկրի տնտեսական զարգացման ռազմավարության մշակման համար: Հոդվածը նվիրված է Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի տնտեսության ինտեգրման հիմնախնդիրների ուսումնասիրմանը, նոր ճյուղերի և բարձր տեխնոլոգիական արտադրությունների ձևավորման հնարավորությունների գնահատմանը, երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանը և տնտեսական զարգացման կառավարման մեխանիզմների կատարելագործմանը: Աշխատանքում գնահատվել են նաև այլ երկրների հետ ՀՀ տնտեսական համագործակցության հեռանկարները և առաջարկվել են դրա կենսագործման ուղիներ:

Առանցքային բառեր. *Եվրասիական տնտեսական միություն, ինտեգրում, կառավարման մեխանիզմներ, ազգային տնտեսություն, մրցակցային առավելություններ, ռազմավարություն, օտարերկրյա ներդրումներ, բիզնես-միջավայր, բարձր տեխնոլոգիական արտադրություն:*

V. B. Bostanjyan

PROBLEMS OF CONTROL OF ARMENIA'S ECONOMIC DEVELOPMENT IN THE FRAMEWORK OF THE EAEU

At present, issues related to the place and role of Armenia in the modern system of economic relations, taking into account the complex geopolitical and geo-economic situation of the country, are relevant for the development of an economic development strategy for the country. The article is devoted to studying Armenia’s economic integration problems in the Eurasian Economic Union, as well as identifying new and high-tech industries, providing opportunities for the assessment of competitive advantages of the country, and improving mechanisms of management of the economic development. The work also evaluates the prospects of Armenian economic cooperation with other countries and suggests its implementation methods.

Keywords: *Eurasian Economic Union, integration, management mechanisms, national economy, competitive advantages, strategy, foreign investments, business environments, high-tech production.*

Бостанджян Вардан Бабкенович – докт. экон. наук, профессор факультета Экономики и управления, ЕГУ

ՀՏԴ 005.342:330.322 (479.25) ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Թ.Ն. Մանասերյան

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Եթե միկրո մակարդակում ներդրումները կարող են լինել հայեցողական՝ ելնելով տվյալ ձեռնարկության ռազմավարական կամ ընթացիկ նպատակներից և նյութական հնարավորություններից ու արտաքին փոխառու ռեսուրսներ ներգրավելու պատրաստակամությունից, ապա որևէ երկրի համար տնտեսության զարգացումը, ընդհանուր առմամբ, անհնար է պատկերացնել առանց ներքին և արտաքին ներդրումների համադրված և արդյունավետ օգտագործման: Հետևաբար, կայուն և բարձր տնտեսական աճ արձանագրելու և տնտեսական անվտանգության բավարար մակարդակ ապահովելու համար պետությունը պարտավոր է ապահովել գրավիչ և առողջ ներդրումային միջավայր:

Առանցքային բառեր. *ներդրումներ, նորարարություններ, տնտեսական անվտանգություն, բնակչության կենսամակարդակ, բարձր տեխնոլոգիաներ, տնտեսական աճ:*

Ակնհայտ է, որ որևէ երկիր, այդ թվում նաև Հայաստանը չի կարող զարգանալ և ապահովել տնտեսական անվտանգության բավարար մակարդակ առանց ներդրումների: Եթե միկրոմակարդակում ներդրումները կարող են լինել հայեցողական՝ ելնելով տվյալ ձեռնարկության ռազմավարական կամ ընթացիկ նպատակներից և նյութական հնարավորություններից ու արտաքին փոխառու ռեսուրսներ ներգրավելու պատրաստակամությունից, ապա որևէ երկրի համար տնտեսության զարգացումը, ընդհանուր առմամբ, անհնար է պատկերացնել առանց ներքին և արտաքին ներդրումների համադրված և արդյունավետ օգտագործման: Հետևաբար, կայուն և բարձր տնտեսական աճ արձանագրելու և տնտեսական անվտանգության բավարար մակարդակ ապահովելու համար պետությունը պարտավոր է ապահովել գրավիչ և առողջ ներդրումային միջավայր:

Վերջին տարիներին նկատվող ներդրումային հոսքերի կրճատումը վկայում են ներդրումային միջավայրի խիստ անհրապույր վիճակի, անվստահության մթնոլորտի և տնտեսական ռիսկերի աճի մասին: Ստորև ներկայացվում է օտարերկրյա ներդրումների պատկերը 2018 թվականի հունվար - դեկտեմբեր ամիսներին:

Ակնհայտ է նաև, որ օտարերկրյա ներդրումները չեն կարող աճի միտում ունենալ, եթե չի արձանագրվում ներքին ներդրումների աճ: Իսկ վերջինս ուղղակիորեն պայմանավորված է առնվազն երկու փոխկապակցված գործոնով. առաջինը բնակչության վճարունակության ցածր մակարդակով, ինչն իր հերթին պայմանավորված է աղքատության տեմպերի աճով, իսկ երկրորդը՝ բնակչության վճարունակ խավի կողմից վստահության պակասով, ինչում վերջին դերը չի խաղում կոռուպցիան և անարդար մրցակցությունը: Սա է պատճառը, որ պետության ներքին պարտքը կազմող պետական պարտատոմսերը, ներառյալ եվրոպարտատոմսերը, գերազանցապես, տեղաբաշխվել են արտերկրի ռեզիդենտների շրջանում: Ինչ վերաբերում է բնակչության վճարունակ զանգվածին, ապա այն գերադասում է ձեռք բերել արտերկրի առավել հեղինակավոր ընկերությունների արժեթղթեր կամ զարգացած երկրների կառավարությունների համեմատաբար նվազ եկամտաբերությամբ պարտատոմսեր: Մյուս կողմից՝ ներդրումների պակասը պայմանավորված է մենաշնորհների դեմ պայքարի ցածր արդյունավետությամբ և նորարարությունների հանդեպ ցածր պահանջարկով, քանի որ տեղական մենաշնորհները կամ օլիգոպոլիաներն առանձնապես մեծ հետաքրքրություն չեն ցուցաբերում մրցունակության բարձրացման, նորարարությունների ոլորտում ներդրումների ներգրավման նկատմամբ [2]:

21-րդ դարում նորարարության ոլորտում ներդրումային գործընթացները համաշխարհային տնտեսությունում ուժեղացել են և մեծ մասշտաբների հասել: Այդ գործընթացները տանում են արտադրության արմատական արդիականացման, տնտեսական հարաբերությունների սոցիալական տարրերի պահպանման, բնակչության կենսամակարդակի բարձրացման:

Տնտեսական անվտանգությունն իր մեջ ընդգրկում է երկրի տեխնոլոգիական անկախությունը, որը 21-րդ դարում բնորոշվում է իր գիտատեխնիկական ներուժով, քանի որ տնտեսության արագ և կայուն աճը կպահանջի ներդրումային և նորարարական ակտիվության մի քանի անգամյա բարձրացում:

Աղյուսակ 1

ՕՈՒՆ ըստ ներդրումների տեսակի՝ 2017-2018թթ. [1]

Ներդրումների տեսակները	Ֆինանսական պարտավորությունների զուտ ստանձնում			Ֆինանսական ակտիվների զուտ ձեռբերում		
	2017թ. հունվար-դեկտեմ-քեր	2018թ. հունվար-դեկտեմ-բեր	Բացար-ձակ փոփո-խությու-նը	2017թ. հունվար-դեկտեմ-բեր	2018թ. հունվար-դեկտեմբեր	Բացար-ձակ փոփո-խությու-նը
Ընդամենը ներդրումներ[2]	400.3	811.2	410.9	-138.9	121.4	260.3
ՈՒղղակի ներդրումներ	249.8	254.3	4.5	22.3	-11.7	-34.0
Պորտֆելային ներդրումներ	-56.8	-16.7	40.1	30.0	14.6	-15.4
Այլ ներդրումներ	207.3	573.7	366.4	-241.0	164.9	405.9
Առևտրային վարկ	9.2	13.0	3.8	-27.1	-2.2	24.9
Կարճաժամկետ	11.0	13.9	2.9	-14.9	-5,6	9.3
Երկարաժամկետ	-1.8	-0.8	1.0	-12.2	3.4	15.6
Վարկեր	414.8	148.6	-266.2	-168.2	88.9	257.1
Կարճաժամկետ	-21.6	4.4	26.0	-188.8	117.9	306.7
Երկարաժամկետ	444.3	180.4	- 263.9	20.7	-29.0	-49.7
Դրամավարկային կար-գավորման մարմիններ	68.0	-38.5	-106.5	-	-	-
Պետական կառավարմտն մարմիններ	494.2	186.3	-307.9	-1.3	-1.4	-0.1
Բանկեր	-90.6	114.2	204.8	20.0	4.2	-15.8
Այլ հատվածներ	35.2	-117.9	-82.7	1.9	-31.8	-33.7
Դրամական միջոցներ և ավանդներ	-218.8	372.2	591.0	-56.7	84.0	140.7
Կարճաժամկետ	-237.2	259.0	496.2	-56.4	80.9	137.3
Երկարաժամկետ	18.4	113.2	94.8	-0.3	3.2	3.5
Ապահովագրական, կենսաթոշակային և ստանդարտացված ծրագրեր	1.3	1.1	-0.2	0.7	1.2	0.5
Այլ կապիտալ	-	-0.9	-0.9	4.1	1.8	-2.3
Այլ հաշիվներ	0.6	39.5	38.9	6.1	-8.7	-14.8
Պահուստային ակտիվներ	-	-	-	49.8	-46.3	-96.1

Ներդրումային գործընթացն իրականում հանրային վերարտադրության կարևոր բաղկացուցիչներից է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք ֆինանսական միջոցներ են, արժեթղթեր, այդ թվում նաև՝ սեփականության իրավունք, նաև՝ այլ իրավունք, որն ունի դրամական արտահայտություն: Այլ խոսքով, ներդրումները ներկայիս դրամական միջոցներից հրաժարումն է՝ ապագայում եկամուտների ստացման համար: Ընդհանուր առմամբ, ներդրումների աղբյուրները կարելի է բաժանել երկու խմբի՝ սեփական և փոխառու միջոցների: Հատկանշական է, որ խորհրդային գիտության պատմականորեն ձևավորված կառուցվածքն իր մեջ ընդգրկում էր ակադեմիական, բարձրագույն, ճյուղային և գործարանային գիտությունը: Մինչև անկախացումը երկրում բոլոր տեսակի աշխատանքների 60.5%-ը հիմնարար հետազոտություններն էին, 26.7%-ը՝ կիրառական, 12.8%-ը՝ մշակման: Այդ տարիներին տեսական և կիրառական գիտության, գիտատեխնիկական ծառայությունների բնագավառում զբաղված էր բնակչության մոտ տասը տոկոսը [3]:

Հատկանշական է, որ զարգացած երկրները և նոր ինդուստրիալ պետությունները վերջին 20

տարում ակտիվորեն իրականացնում են գիտության հարկային մոտիվացման քաղաքականություն: 20-րդ դարի 90-ական թթ. գիտական արտադրանքի բաժինը մեր երկրի վերամշակող արդյունաբերության արտահանման մեջ կրճատվել է ավելի քան տասն անգամ: Ֆինանսական միջոցների բաժինը, ուղղված գործող ձեռնարկություններում նորարարական գործունեությանը, մոտ 10…15 անգամ ցածր է, քան զարգացած երկրներում:



Նկ. Հայաստանի արդյունաբերությունը 1970-2017թթ.[4]

Համաշխարհային տնտեսության գիտական արտադրանքի ծավալը կազմում է 2.3 տրիլիոն դոլար: ԱՄՆ-ի բաժինն այս շուկայում 36% է, Ճապոնիայինը՝ 30%, Չինաստանինը՝ 6% [5]: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա թույլ ներդրումային ակտիվությունը կարելի է կապել պետական ֆինանսավորման բավարար չլինելու հետ, բայց սա միայն խնդրի մի կողմն է: Ոչ պակաս կարևոր են համարվում այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ովքեր և ինչպիսի մեխանիզմներով են հատկացնում այդ միջոցները: Առայժմ գիտության կառուցվածքային վերակառուցումները չեն համարվում առաջնահերթ խնդիրներ տնտեսական բարեփոխումների ժամանակահատվածում:

Ակներևաբար, Հայաստանի ապագան կապված է ներդրումների և նորարարությունների հետ: Իսկ որպեսզի վերականգնվի ներդրումանորարարական ներուժը և արտադրական ֆոնդերի նորմալ վերարտադրությունը, այդ խնդիրները պետք է առաջնահերթ լուծում ստանան, որի համար պահանջվում է համապատասխան ներդրումային և նորարարական քաղաքականության մշակում: Տնտեսական աճի վերականգնման նոր քաղաքականության ձևավորման խնդիրը հատկապես արդիական է կապված այն հանգամանքի հետ, որ խոսքը ոչ միայն զարգացման գործընթացի կայունացման, այլև երկրի ներդրումային համալիրի քայքայված ներուժի վերականգնման մասին է: Երկարաժամկետ հեռանկարում պետությունը պետք է կենտրոնանա ՀՆԱ-ում գիտության արտաքին ծախսերի բաժնի մեծացման վրա, որը շեմ է այս ցուցանիշի համար, այսինքն՝ մեծություն, որի առկայությունն ապահովվում է ազգային անվտանգության թույլատրելի նվազագույն մակարդակը (Հայաստանում այսօր այս բաժինը կազմում է 0.06%-ից պակաս, Շվեդիայում՝ 3.8%, Ճապոնիայում՝ 3.04%, ԱՄՆ-ում՝ 2.64%): Հետազոտողների միջին տարիքը, ովքեր ունեցել են գիտական աստիճան 2012թ. 55 տարեկանն է (առաջատար երկրներում այս ցուցանիշը 44 է): Շեմային նշանակությունն այս ցուցանիշի (48 տարի) կարող է հասնել մինչև 2020թ.: Գիտական սարքավորումների միջին տարիքը գերազանցում է 12 տարին, այն դեպքում, երբ ՏՀԶԿ երկրներում այն 5...6 տարի է, իսկ այս ցուցանիշի շեմային մակարդակը՝ 7 տարի: Կանխատեսումների համաձայն՝ գիտական սարքավորումների միջին տարիքը 2020թ.-ին չի գերազանցի 9 տարին [6]:

Նորարարական ակտիվության մակարդակը 2017թ. 10.6% էր: Գնահատականների համաձայն մինչև 2020թ. այն կհասնի մոտավորապես 17%-ի: Տեխնոլոգիական նորարարություններում ծախսերի բաժինը արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում 2017թ. կազմել է 5.18%, իսկ 2020թ. այն կկազմի մոտավորապես 15% [7]:

Հայաստանի տնտեսության վերակազմավորումը կապված է տեխնոլոգիական զարգացման հեռանկարների հետ: Այս խնդրի բարդությունն այն է, որ կայուն տեխնոլոգիական առաջընթաց ապահովելու համար պահանջվում է որոշել ոչ միայն պետական աջակցություն պահանջող հիմնական ուղղությունները, այլև տեխնոլոգիական մակարդակը, որին նրանք պետք է հասնեն: Օրինակ, 1920-ական թթ. իրականացված ինդուստրիալացումը հաջող կերպով իրականացվեց այն բանի շնորհիվ, որ պետական իշխանությունը որոշիչ և արագ կատարեց նոր տեխնոլոգիական ռեժիմի ներդրում [8]: Պետական ներդրումային քաղաքականությունը պետք է ձևավորվի ազգային տնտեսության երկարաժամկետ նպատակների և խնդիրների համատեքստում: Տնտեսական անվտանգության տեսանկյունից անհրաժեշտ է մշակել առանձին ներդրումային նախագծերի և ծրագրերի պետական աջակցության չափանիշներ: Բացի այդ, անհրաժեշտ են ներդրումային գործընթացի կառավարման հատուկ մեխանիզմներ: Պետական ներդրումային քաղաքականությունը ենթադրում է պետական աջակցության չափանիշների ընտրություն, այլ ոչ թե պարտադիր բյուջետային ներդրումներ: Կարելի է առանձնացնել չափանիշների որոշման երկու մոտեցում՝ տեխնոլոգիական և տնտեսական: Տեխնոլոգիական մոտեցումը ելնում է գիտատեխնիկական առաջընթացի առաջնահերթությունից, իսկ տնտեսական մոտեցումը հիմնվում է տնտեսական սկզբունքների վրա: Բացի այդ, պետական և մասնավոր ներդրումային կապիտալը սահմանափակ է: Այդ իսկ պատճառով չափանիշների որոշման ժամանակ, որոնք ուղղված են պետական օժանդակության այս կամ այն ծրագրերին, թերևս պետք է առաջնորդվել տնտեսական չափանիշներով:

Ներդրումային ծրագրերի պետական աջակցության որոշումների կայացման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել վճարունակ պահանջարկի աճի հեռանկարները (ներքին և արտաքին) այն ապրանքների և ծառայությունների տեսակների նկատմամբ, որոնք շուկա դուրս կգան:

Հաջողություն կարող է ակնկալել այն ներդրումային նախագիծը, որի արտադրանքով հետաքրքրված է վճարունակ սպառողը, ինչպես նաև նա, ով ունի մրցակցային առավելություններ: Տնտեսական անվտանգության տեսանկյունից անհրաժեշտ է հաշվի առնել այս կամ այն ներդրումային նախագծի իրագործումից մուլտիպլիկատիվ էֆեկտը, որը մեծացնում է արտադրության և իր հետ կապված ճյուղերի զարգացումը: Մուլտիպլիկատիվ էֆեկտները մեծացնում են վճարունակ պահանջարկը, աշխատանքային տեղերը, նպաստում են հարկային բազայի աճին և վերջնական արդյունքում տանում են տնտեսության վերելքի:

Ներդրումային գործունեության պետական կարգավորումը կարող է իրականացվել տարբեր ձևերով՝

- օրենքների և այլ նորմատիվ ակտերի ընդունում, որոնք ապահովում են ներդրումային և նորարարական գործընթացի մասնակիցների շահերը և հարաբերությունները,
- երկարաժամկետ ներդրումային ռազմավարության մշակում՝ հաշվի առնելով տնտեսության անվտանգության ցուցանիշները և ազգային ու տեղական առաջնահերթությունները,
- կարևոր է սոցիալական, տնտեսական, գիտական և ռազմական և այլ նման օբյեկտների ուղիղ ֆինանսավորումը,
- ներդրումային և նորարարական քաղաքական առաջնահերթություն՝ պետական և տեղական մակարդակներով:

Կարելի է փաստել, որ մինչ օրս տեղ գտած տնտեսական զարգացումները բերել են երկիրը նոր որակական սոցիալ-տնտեսական դիրքի: Սակայն այն գործոնները, որոնք ընկած են եղել նախաճգնաժամային տարիների տնտեսական աճի հիմքում, այլևս գոյություն չունեն:

Անհրաժեշտ է տնտեսական աճի գործոնների նոր խումբ, որը կորոշի Հայաստանի տնտեսական զարգացման դինամիկան: Նոր գործոնների խմբի ձևավորումը կախված է տնտեսական քաղաքականության ընտրությունից, հետևաբար նաև՝ տնտեսության զարգացման նոր մոդելի ընտրությունից: Եվ անհրաժեշտ է առաջին հերթին ներդրումային մոդել, որի դեպքում տնտեսական աճի հիմքում ընկած կլինի տնտեսության իրական հատվածի մասշտաբների մեծացումը:

Պետական ներդրումների համար որպես տնտեսության առաջնահերթ ոլորտներ, այդ թվում՝ հաշվի առնելով տնտեսության անվտանգությունը կարելի է առանձնացնել՝

- արտադրությունը, որն ուղղված է ներկրումը փոխարինող արտադրանքի թողարկման վրա,
- կազմակերպությունները, որոնք ուղղված են մրցունակ արտադրանքի թողարկմանը,
- արտադրությունը, որի նկատմամբ երկարաժամկետ պահանջարկ կլինի,
- կազմակերպությունները, որոնք կթողարկեն ավելի բարձրորակ արտադրանք:

Եթե տեխնիկական համակարգը կատարելագործվում է անփոփոխ տեխնոլոգիական սկզբունքի հիման վրա, ապա, ըստ ամերիկացի հետազոտող Ա.Գրոշի տեսության, զարգացման որոշակի մակարդակի հասնելով՝ վերջինիս նոր մոդելների գինն աճում է քառակի շահութաբերության աճին

զուգընթաց [9]:

Պետական ներդրումային քաղաքականությունում կարևոր է համարվում ներդրումների ընդհանուր ծավալի հաշվարկը, ինչպես նաև ներդրումների ճյուղային և ֆունկցիոնալ կառուցվածքի հիմնումը: Ըստ Հարրոդ-Դոմարի պարզագույն մոդելի, որոշվում է պահանջվող ներդրումների ծավալի կախվածությունը արտադրության զարգացումից [10]: Կան նաև հաշվարկների բազմաթիվ այլ մոդելներ, որոնց օգնությամբ կարելի է ստանալ ներդրումների ընդհանուր ծավալը: Միաժամանակ, մեր համոզմամբ, կարևոր է նախ խթանել ներքին ներդրումները՝ վստահության վերականգնման և բնակչության վճարունակության բարձրացման, ինչպես նաև ներդրումային միջավայրի գրավչության բարձրացման միջոցով:

Պետության և հայրենական ներդրողի շահերը առավել վառ են արտահայտվում հանքարդյունաբերության ոլորտում [11]: Այստեղ վերջիններս հսկվում են կախված այն բանից, թե որքանով ճիշտ են որոշված հանքավայրերի պահուստները, դրանց շահագործման պայմանները, անցյալ տարիների ծախսերը, մանրամասն ուսումնասիրվել և պայմանավորվել՝ արդյունահանման մասնագիտական պայմանների մասին՝ համապատասխան միջազգային իրավունքի չափանիշների:

Ներկայումս, երբ մեծանում է կառավարության արտաքին քաղաքական, արտաքին տնտեսական և մի շարք նախարարությունների ակտիվությունը՝ արտասահմանյան ներդրումների ներգրավման ուղղությամբ, ինչպես ճգնաժամային միտումները զսպելու, այնպես էլ ֆինանսա-տնտեսական կայունացման համար, ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է ընդգծել, որ մենք բավական շահագրգռված ենք արտասահմանյան ներդրումների ծավալի մեծացմամբ, բայց ոչ ցանկացած պայմաններով: Ակնհայտ է, որ մեր շահերից է բխում համագործակցել այն ընկերությունների հետ, որոնք գալիս են լուրջ նպատակներով և պատրաստ են կապիտալ ներդնել երկար ժամանակով:

Միաժամանակ պետք է ձգտել այն բանին, որպեսզի ներդրողները բաշխվեն ըստ ճյուղերի և ըստ տարածքների այն նպատակով, որպեսզի չստեղծվեն նոր մենաշնորհներ, այս անգամ արդեն ի դեմս արտասահմանյան ընկերությունների: Վերջապես պետությունը պետք է մշտապես վերահսկի ներդրումները հանքարդյունահանման և պաշտպանության ճյուղերում [12]: Հայաստանում արտասահմանյան ներդրումների պետական կարգավորումը բխում է ոչ միայն արտասահմանից կապիտալ ներդրումների խթանման, այլև երկրի արտաքին տնտեսական անվտանգության և անկախության պահպանման խնդրից:

Համաշխարհային պրակտիկան ցույց է տալիս, որ արտասահմանյան, ինչպես նաև հեռացած հայրենական կապիտալը, գալիս է այն ժամանակ, երբ երկրում ստեղծվում են ներդրողների համար գրավիչ տնտեսական պայմաններ [13]: Ներդրումային միջավայրի բարելավումը՝ միակ հուսալի երաշխիքն է: Բացի դրանից, կարևոր են արժութային վերահսկողության, աուդիտի համակարգի ամրացումը, հարկային ծառայության ուժեղացումը:

Չի կարելի շրջանցել այն փաստը, որ արտասահմանյան ներդրումների ներգրավումը կատարվում է արտադրության անդրազգայնացման որոշակի իրադրությունում: Գլխավորն այստեղ այն է, որ անդրազգային գործարարական կառուցվածքների մասնակիցները, որոնք ներկայացնում են արդյունաբերական կապիտալը, անկախ տարածման հիմնավորումից և սեփականության ձևից, շահագրգռված են համագործակցելու տնտեսական միջազգային արտադրական, գիտատեխնիկական ոլորտներում: Այս դեպքում հավասարապես օբյեկտիվորեն շահագրգռված են նաև դրամական կապիտալը ներկայացնող նշված կառուցվածքների մասնակիցները (բանկերը, ներդրումային ընկերությունները և այլն): Կարելի է եզրակացնել, որ առավել ընդունելի են ֆինանսաարդյունաբերական տիպի կորպորացիոն կառուցվածքները, այսինքն՝ անդրազգային ֆինանսաարդյունաբերական խմբերի կազմակերպական ձևերը՝ անդրազգային համագործակցային հարաբերությունների տեսակետից, ինչպես նաև տարբեր երկրների արտադրողների միջև՝ տեխնոլոգիական շղթաների արդյունավետ մշակման տեսանկյունից, թեև որոշակի պայմաններում կարող են կիրառվել միջազգային բիզնեսի կազմակերպման այլ ձևեր, օրինակ՝ համատեղ ձեռնարկություններ, մարտավարական դաշինքներ և այլն:

Ակնհայտ է նաև, որ ներկայումս ստեղծված շուկայական մրցակցության բացակայությունը ազգային գործարարների միջև, էժան աշխատուժը, համեմատաբար էժան հումքը, և արդեն Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու համատեքստում ձևավորվող ավելի ընդարձակ սպառողական շուկան և ամենակարևորը՝ շահույթի բարձր տոկոսը՝ զարգացած շուկայական տնտեսությամբ երկրներում ստացվող շահույթի համեմատ, Հայաստանը գրավիչ են դարձնում արտասահմանյան գործարարների համար: Սակայն արտասահմանյան ներդրողների մեծ մասը, չցանկանալով մեծ գումարներ ռիսկի ենթարկել, միայն ձևավորում են իրենց ձեռնարկատիրական գործունեության համար ընդունելի կառուցվածքներ, դրանք չլցնելով ֆինանսական միջոցներով՝

սպասելով իրավիճակի առավել կայունացմանը [14]:

Արտասահմանյան կապիտալով գործարարությանը, ընդհանուր առմամբ, բնորոշ է՝ ոչ-մեծ հիմնադիր ֆոնդը, ձգտումը ներգրավել լրացուցիչ միջոցներ՝ գործունեության դիվերսիֆիկացման ուղղությամբ՝ մատչելի պայմաններով վարկերի ձևով, ուղղվածությունը՝ պատրաստի արտադրանքը վաճառել ազատ փոխարկելի արժույթով:

Արտասահմանյան ներդրողներին տրվել է հնարավորություն՝ կապիտալները ներդնել տնտեսության ցանկացած ճյուղում, հասկանալի է, բացի այն ճյուղերից, որոնց վրա տարածվում են համապատասխան օրենքների կամ ենթաօրենսդրական իրավական ակտերի սահմանափակող դրույթները: Նրանք կարող են միջոցներ ներդնել նոր ստեղծվող և արդիականացվող հիմնարկներում, արժեթղթերում, իրավունք ձեռք բերել մտավոր սեփականության կառավարման ոլորտում: Ընդորում, մեր երկրում, համաձայն գործող օրենսդրության [15], արտասահմանյան կապիտալի մասնակցությամբ, համաձայն կապիտալի պատկանելության չափորոշիչի, կարող են գործել չորս տիպի ձեռնարկություն՝

- հիմնարկություններ օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ,
- կառույցներ, որոնք ամբողջովին պատկանում են օտարերկրյա ներդրողներին, ինչպես նաև դրանց դուստր ձեռնարկություններ և մասնաճյուղեր,
- արտասահմանյան իրավաբանական անձանց մասնաճյուղերը,
- արտասահմանյան ֆիրմաների ներկայացուցչություններ:

Այսպիսով, հույժ կարևոր է բարենպաստ պայմանների ստեղծումը տնտեսության կառուցվածքային բարեփոխումների համար, հստակ մարտավարության մշակումը՝ դրան հաղորդելով հստակ ուղղվածություն՝ ոչ միայն առանձնացնելով անհրաժեշտ առաջնահերթությունները, այլև օգտագործելով ներդրումների խթանման անմիջական և անուղղակի մեթոդների ամբողջ զինանոցը՝ կապիտալի ներհոսքի ապահովման համար հատկապես գիտատար արտադրություններում և տնտեսության իրական հատվածի այլ ենթաճյուղերում:

Աղյուսակ 2

Հայաստանի տնտեսության իրական հատվածում կատարված արտերկրի ներդրումներն՝ ըստ երկրների առաջին տասնյակի, 2018թ.

Երկրներ	2017թ. հունվար-դեկտեմբեր		2018թ. հունվար-դեկտեմբեր		Բացարձակ փոփոխությունը	
	զուտ հոսքեր[1]		զուտ հոսքեր[1]			
	ընդամենը[2] ներդրումներ	որից՝ արտաքին ներդրումներ	ընդամենը[2] ներդրումներ	որից ուղղակի ներդրումներ	ընդամենը[2] ներդրումներ	որից՝ ուղղակի ներդրումներ
ԸՆԴԱՄԵՆԸ	74 619.9	93 043.9	27 581.4	111 870.5	-47 038.5	18 826.6
այդ թվում						
Ջերսի	107 888.2	107 888.2	20 640.0	20 640.0	87 248.2	-87 248.2
Գերմանիա	2 931.6	14 419.0	-30 923.2	15 602.3	-33 854.8	1 183.3
Լյուքսեմբուրգ	2 890.1	-21 891.2	1 724.6	-1 067.1	-1 165.5	20 824.1
Հունգարիա	1 671.4	1 613.2	195.6	-5.3	-1 475.7	-1 618.5
Պանամա	1 053.5	-212.8	-280.2	-	-1 333.7	212.8
Կուբա	751.1	751.1	126.1	126.1	-625.0	-625.0
Իռլանդիա	650.9	634.4	1 570.6	1 436.4	919.7	802.0
Արաբական Միացյալ Էմիրություններ	492.3	480.9	567.0	587.7	74.7	106.8
Միացյալ Թագավորություն	394.9	1 648.2	4 052.0	745.8	3 657.1	-902.4
Շվեյցարիա	328.0	275.6	322.8	257.4	-5.2	-18.2

Արտասահմանյան ներդրումների ծավալները տեղական շուկայում տարեցտարի մեծանում են, սակայն տարիմաստությունն այն է, որ եթե բոլոր եվրոպական երկրներում արտասահմանյան ներդրումների ծավալների աճի տեմպերը սովորաբար հետ են մնում տեղական ներդրումներից, ապա Հայաստանում մինչ օրս շարունակվում է հայրենական ներդրումների անկումը արտասահման-

յանի գրեթե կրկնակի աճի դեպքում: Ըստ որում, ՕՈՒՆ-ի կառուցվածքում, չնչին բացառությամբ, գրեթե բացակայում են պորտֆելային ներդրումները: Ներկայումս աստիճանաբար փոխվում է այդ ներդրումների կառուցվածքը և աշխարհագրությունը [16]:

Համաշխարհային պրակտիկայում հայտնի արտասահմանյան ներդրումների գրեթե բոլոր ձևերն առկա են Հայաստանի տնտեսությունում. արտասահմանյան երկրների կառավարություններից, պորտֆելային՝ ներդրումային ֆոնդերից, կորպորատիվ արժեթղթերի գնման բանկերից, մարտավարական ներճյուղային՝ խոշոր արևմտյան ձեռնարկություններից և մատակարարների հետ աշխատանքի կազմակերպման համար տրեյդերներից, նպատակային՝ առանձին մանր ֆիրմաներից և ոչ պետական պրոֆեսիոնալ կամ տարածաշրջանային միավորումներից՝ հիմնականում հետխորհրդային տարբեր երկրներից՝ արտադրության աջակցման համար:

